



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4003

Ազգային ընտառելեկուաց  
աշխարհ

491.99-8  
Մ-25

P - 1880

491.99-8  
Մ-25

Առաջնահայրեան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՃԻՄՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՎ.

ԵՒ ԱՅԲԵՆԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒԱՑ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

Ուսումը լինե լուզ, մանուկը լինե զուարժ. Մանուկը ծանութեան գողնին ոյս է:

Նո ձեզ սիրով տուն, տանիք,  
Բարեկամներ, ընտանիք,  
Յափշտակեալ կը մոռնամ  
Ալիք, անդունդ, մահ անդամ:  
Ունաւնեանեց:

ՅՈՒՆԵՑ Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

1902

Յովհաննէս Մարտիրոսեանցի Տպարանում

1880

2010

64924-42

ԱՐԴՅՈՒՆՎՈՐԻ

# ԳՐԱՎԻճԱ ԺԱՌԵՄԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դозволено Цензурою. Тифлисъ, 10-го Июля 1880 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայոց լեզու պատմական գրականության  
և այլ հայության հայության հայության

հայության պատմական գրականության  
և այլ հայության հայության հայության



Տիպ. И. Мартиросианца. на Орбеліановской улицѣ д. № 5.

0881

ԱՐԴՅՈՒՆՎՈՐԻ

# ԸՆՏԱԿԱՆ ԱՃԻՄԵՐՔ

ԱՐԱՋԻՆ ՑԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ \*)

ՀԱՅՈՒԱԾՆԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

\*) Այս երկու տեսակ հատուածներեց խրաբանչեւը տարբեր գործառնութեան ունի. տես «Բացատրութիւններ» ուսուցչի համար, մանաւանդ վերը հատուածի (Ուժով կատուի) կարդալու վարժութեան բացատրութիւնը:

23099 72

Ա Հ Ա Յ Ա Խ Ա

# ՔՅԱՂԻ ԺԱԿԱՐԴ

ԸՆԿՐԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Պատմութեան մասին պատմութեան)

ԴՐԱ ՊՐԵՄԻ

ԴՐԱ ՊՐԵՄԻ

ԴՐԱ ՊՐԵՄԻ



12618-58

Հայաստանի ՀՀ

Հայոց պետություն

Հայոց ժողով

Հայոց օջախ

Հայոց պատրիարք

Հայոց հայոց

Հայոց պատրիարք

Հայոց պատրիարք

Հայոց պատրիարք

Հայոց պատրիարք

Հայոց պատրիարք

Հայոց պատրիարք առ Արքա մայնակ

I

ԾՐԱԲՐՅԱ

**ՆԱԽ ԱՐՁԱԿ ԵՒ ՍՊԱ ԲԱՌ ԱՌ ԲԱՌ**

## **ՊԱՏՄԵԼՈՒ \***) ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Հայուան առ Արքա մայնակ  
առ Արքա մայնակ առ Արքա

առ Արքա մայնակ առ Արքա

1. ՃՆՃՂՈՒԿ

առ Արքա մայնակ առ Արքա

Կառուը ցորեն փոեցի՝ չողցնելու Համար,  
Ճնճղուկներ Եկան ժողվան՝ ուտելու Համար,  
Քարը վեր կալայ Խփեցի՝ ուզանելու Համար,  
Թռան գնացին ըերգի՝ տանիք՝ գանգտելու Համար,  
Ղասարի դանակ ուզեցի՝ մորթելու Համար,

Մեծ պղինձն ուզեցի՝ Եփելու Համար,  
Սաղ քաղաքը մեծարեցի՝ ուտելու Համար,  
Երեցներ ժողովեցան՝ օրջնելու Համար,  
Աղջեկներ ժողովեցան՝ ըմբուլի Համար,  
Պառաւներ ժողովեցան՝ փետելու Համար,  
Քեօխուայ—գղիք տուն վագեցին՝ Խորվածի Համար,  
Քեթխուղէք ըազմեցան՝ այս գովքի Համար—

\*.) Ուտման վերջերը նաև կարտալ յարմար են նուն այս Հատուածները:

Ա, Ճ՛ՆՇԽՆԵՒՅԻ,  
Կորհիր ուսողի;  
Ախոռու փոքի;  
Ուռեն յուրի;  
Խըմեն ջըռի;  
Առուի եղիչի;  
Պըտի ճըռի;

**Փախչեն երթան՝ կանգալու համար:**

## 2. ԱՐԱԴԱՂ

Կուկուկուկո՛ւ սանամէր,  
Էն մէկ հաւ կար, ո՞ր զնաց:  
— Մարաւ աղբիր կո՞ւ զնաց:  
Ի՞նչ կար կտուց! — Զիր ու չամիչ:  
Ո՞ր էր տամում! — Հարս ու փեսին:  
Հարսն ո՞ր է նստել! — Ուսէ թախտին:  
Հարսն ի՞նչ է եփում! — Կո՞ւրկոտ:

Ո՞վ է բերել! — Պատի լաշոտ:  
Ո՞վ ապսարել! — Զաշալ Աշոբ:  
Ո՞վ է հարել! — Ազա Սօթան:  
Ո՞վ է դրել! — Բաց սպատուհան:

Ո՞վ է կերել! — Կարայ փըշիկ!  
Վայ, կարայ փըշիկ, վայ, կարայ փըշիկ, և քայլուն  
Քամէին ուտի քո թրշիկ!

## 3. ԱՐԵԳԱԿ

Արեգա՛կ, արեգա՛կ, զուրս արի,  
Հձեն ու մէրդ եկել են,  
Ուսէ ըւեթ ըւերել են,  
Պատի ծակը կտիւլ են.

4. ԱՌԱԽՈՏ

Լուսոցու, լուսոցու,

Լուսն է բորին,

Սէրտին է ծուրին.

Մուկն Եկել է, տարել է,  
Կատուն յետնին վազել է,  
Գոմչի ոտը կոտրել է,  
Աղամանը վլթել է:

Հասն է լուսին.

Աշխատառը, վը իս բան,

Ծով հորդու քունց դոնի:

Եվ վայ զից վայնով ման երիւնէ քանի բոր էր ու ան, ո՞ւ — ըստ  
ուն խներ անց ար, ան վայ վայ վայ վայ վայ  
Քիմունց զից վայնով ման վայ վայ վայ վայ վայ  
Լուսուորիւն կանչուն էր, ուն վայ վայ վայ  
ուն խներ անց ար, Աբե ու պատի գրութենս, ուն վայ վայ վայ  
ուն խներ անց ար, Աբե արենէր իւղաւաւէին ուն օ՞ւ — ըստ  
ուն վից նմի վայ վայ օս ան վայ վայ վայ  
**5. ՔՈՅՑ ՈՒ ԵՂԲԱՑԻ**  
ուն խներ անց ար, օս ան վայ վայ վայ  
Ենեմ ծառը զարդարեմ, ուն օ՞ւ — ըստ  
ուն խներ վէկ գամ տակը մինդարեմ, ուն մաց զամ  
Հաւե վառիկը մորթեմ, ուն օ՞ւ — ըստ  
ուն խներ անց ար, Տանեմ գետը լուանամ, ուն վայ վայ վայ  
Եփեմ ու լուանին տամ, ուն օ՞ւ — ըստ  
Չոքանն ինձ մէկ ոչխար տայ, ուն մայն զամ  
Ոչխարըն Աստծուն տան, ուն մայն զամ  
Աստծուած ինձ մէկ եղանցը տայ: ո՞ւ — ըստ  
ուն խներ անց ար, տապար ուն վայ վայ վայ վայ  
Եղայը, Եղայը, ջան Եղայը,  
Ջանը քեզ մատազ, Եղայը.  
Կարայ եմ կարել, կարձ եկել,  
Բուզմայ եմ շարել, լսու եկել.  
Ճնճուղի լեզուն մեղսով  
Քեզ Համար եմ տապակել:

**6. ՈՒԺՈՒՎ ԿԱՏՈՒ**  
Եղել է մէկ տըմիռան շոն, զնաց մտաւ բալերի մէջ.  
Բաղը կոտրեց նորա ոտը, շոնը հարցրեց  
ասաց — տօ՛, բազ, դու շատ ուժով ես,  
Ասաց — հո՛ւ, ես որ ուժով լինէի՝ արեգակն ինձ չէր այրի:  
Գնաց արեգակի մօտ՝ ասաց — տօ՛, արեգակ, դու շատ  
ուժով ես:  
Ասաց — հո՛ւ, ես որ ուժով լինէի, աման իմ գէմն չէր բռնի:  
Գնաց ամալի մօտ՝ ասաց — տօ՛, ամալ, դու շատ ուժով ես:

Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, անձրևն ինձնից չէր կաթի:  
Գնաց անձրևի մօտ՝ ասաց—աօ՛, անձրև, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, խոտն ինձնից չէր բուսնի:  
Գնաց խոտի մօտ՝ ասաց—տօ՛, խոտ, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, դառն ինձ չէր ուտի:  
Գնաց գառան մօտ՝ ասաց—աօ՛, գառ, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, գայլն ինձ չէր ուտի:  
Գնաց գայլի մօտ՝ ասաց—տօ՛, գայլ, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, շունն ինձ չէր խեղդի:  
Գնաց շան մօտ՝ ասաց—տօ՛, շուն, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, պառաւն ինձ չէր ջարդի:  
Գնաց պառաւի մօտ՝ ասաց—քա՛, պառաւ, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, մուկն իմ հացը չէր կրծի:  
Գնաց մկան մօտ՝ ասաց—քա՛, մուկ, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, կատուն ինձ չէր ուտի:  
Գնաց կատուի մօտ՝ ասաց—քա՛, կատու, դու շատ ուժով ես:  
Ասաց—հո՛ւ, ես ուժով եմ, որ ուժով եմ—

Մանրիկ, սպիտակ ատամ ունիմ,  
Սուր սուր զայիմ ճանկեր ունիմ,  
Սամուր քիւրքէ մրւշտակ ունիմ,  
Աղեքտեկաց մուշտակն եմ,  
Խաթիւնտեկաց շուշտակն եմ:  
Ամառ պառկած ծալքի զլիսին,  
Զմեռ քնած թոնրի կշտին—  
Մեառ, մեառ, մըլաւան եմ,  
Մկներտեկաց հոգեհան եմ:

#### 7. ԱԻԱԴ ՄԿՆԻԿԻ:

Աւագ մկնիկ խաթունը լաշաքը քաշեց գլխին և գնաց,  
Հուլիս դուրս եկաւ նորա առաջ և ասաց. “Խէ՛ր ըլի, աւագ մկնիկ,  
այդպէս շտապով նոր ես գնում:—

— Խէ՛ր բարեն վեհեր ըլի, գնում եմ մարդ Ճարելու: Հանաց  
“Գնաց, Աստուած յաջողին:”  
Գնաց, գնաց, առաջն եկաւ բերորդին և ասաց. “Խէ՛ր ըլի,  
աւագ մկնիկ, այդպէս շտապով նոր ես գնում:”  
— Խէ՛ր բարեն վեհեր ըլի, գնում եմ մարդ Ճարելու:  
“Գնաց, Աստուած յաջողին:”  
Գնաց, գնաց, գայդին առ Եկաւ առաջն ու ասաց. “Խէ՛ր  
ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով նոր ես գնում:”  
— Խէ՛ր բարեն վեհեր ըլի, գնում եմ մարդ Ճարելու:  
“Գնաց, Աստուած յաջողին:”  
Գնաց, գնաց, մէկ չնորբ ծուռ Եկաւ առաջն ու ասաց. “Խէ՛ր  
ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով նոր ես գնում:”  
— Խէ՛ր բարեն վեհեր ըլի, գնում եմ մարդ Ճարելու:  
“Գնաց, Աստուած յաջողին:”  
Գնաց, գնաց, կրկչալով առաջն Եկաւ և ասաց. “Խէ՛ր  
ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով նոր ես գնում:”  
— Խէ՛ր բարեն վեհեր ըլի, գնում եմ մարդ Ճարելու:  
“Գնաց, Աստուած յաջողին:”  
Գնաց, գնաց, թագաւորի թռութ թռաւ Եկաւ առաջ և ասաց.  
“Խէ՛ր ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով նոր ես գնում:”  
— Խէ՛ր բարեն վեհեր ըլի, գնում եմ մարդ Ճարելու:  
“Արի ինձ առ:”  
— Ինձ ինչո՞վ կը պահեա:—  
“Կտորցովս ո:”  
Մէկ մէկու հաւանեցին, գնացին Եօթն օր, Եօթ գեշէր հար-  
սանիք արեցին, պակուեցան:

Հարսանիքց պոծան, աքլար գնաց քՃՃ անելով դա-  
գում Ճարելու. աւագ մկնիկն էլ մտաւ թոնրի, որ վառի: Թոնրի  
կրակը կպաւ, աւագ մկնիկը մնաց թոնրի մէջ, Եղաւ Ճժտիկ  
վժտիկ:

Աքլարը երեկոյեան տուն Եկաւ, տեսաւ որ աւագ մկնիկն

ընկել է թոնիրը, եղել է ճշտիկ վժտիկ, գնաց կատարը կտրեց,  
կրամոխը թափեց գլխն ու նստեց:

Կաշաղն եկաւ, տեսաւ, ասաց, “Աքլարիկ, դու ինչո՞ւ ես կտ-  
տարկութիկ, մոխրաչափիկ:

— Օ՛չ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ, աւագ մկնիկն  
ընկաւ թոնիր, եղաւ ճշտիկ վժտիկ:  
Կաշաղակի վետուըները թափուեցան, գնաց նստեց ծառի  
վեժն:

Մասաց. “Կաշաղակիկ, դու ինչո՞ւ ես թևաթափիկ:

— Օ՛չ, կաշաղակիկ թևաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ—  
մոխրաչափիկ, աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճշտիկ վժտիկ:

Ծառը կոտրեցաւ, ընկաւ քարի վերաց:

Քան ասաց, “Ծառիկ, դու ինչո՞ւ ես ջղակտոր”:

— Օ՛չ, ծառիկ ջղակտոր, կաշաղակիկ թևաթափիկ, աքլարիկ  
կատարկտրիկ—մոխրաչափիկ, աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել  
է ճշտիկ վժտիկ:

Քարը գլուուց, գնաց ծով:

Մասաց. “Քարիկ, դու ինչո՞ւ ես գլու մլու”:

Օ՛չ, քարիկ գլու մլու, ծառիկ ջղակտոր, կաշաղակիկ թևա-  
թափիկ, աքլարիկ կատարկտրիկ—մոխրաչափիկ, աւագ մկնիկն  
ընկել է թոնիր, եղել է ճշտիկ վժտիկ:

Ծովն էլ մէկէնմէկ բրորաւ:

Բէրորին ասաց. “Ծովիկ, դու ինչո՞ւ ես բրոր մլուր”:

— Օ՛չ, ծովիկ բրոր մլոր, քարիկ գլու մլու, ծառիկ ջղա-  
կտոր, կաշաղակիկ թևաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ—մոխրաչա-  
փիկ, աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճշտիկ վժտիկ:

Բէրորիկը կթոցը շրջեց և գնաց:

Հուշան իրան դէմ ելաւ և ասաց. “Բէրորիկ, դու ինչո՞ւ ես  
կթոց շրջեկ”:

— Օ՛չ, բէրորիկ կթոց շրջեկ, ծովիկ բրոր մլոր, քարիկ գլու  
մլոր, ծառիկ ջղակտոր, կաշաղակիկ թևաթափիկ, աքլարիկ կա-  
տարկտրիկ—մոխրաչափիկ, աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է  
ճշտիկ վժտիկ:

Հովիւն աչս որ լսեց, ոչխարներին անտէը թողեց գնաց.  
մաքին միկարով ետևն ընկաւ մխիթարեց դարձրեց բերեցը եօթի  
անգամ պտտեց ոչխարները բոլորը և ասաց. Աւագ մկան  
ալւագ մկան կողի վերաց,

Ալւագ մկան կողի վերաց,

Ալւագ մկան կողի վերաց:

## 8. ՄԱՐԻ ՈՒ ԿՆԿԱՅ ՍԵՐԱՅ

Երեւ. Քա կնիկ, արի անենք բարակ բովիկ, տանք առնենք հենգ-  
վեց էծիկ, երկու կովիկ:  
Կնիկ. Դու կ'անես բարակ բովիկ, կու տաս կ'առնես կբեր վեց էծիկ,  
երկու կովիկ: Ես էլ կ'երթամ մածուն մերեմ, սերն էլ վըան:  
Երեւ. Դու կ'երթամ մածուն մերես, սերն էլ վըան: Ես կը դառնամ  
բռան կատու, կու գամ՝ կ'ուռեմեն:  
Կնիկ. Դու կը դառնաս բռան կատու, կու գաս կ'ուտես: Ես  
կը դառնամ կազինի կոմբալ, որ քո կողքերդ կոտրուեմ:  
Երեւ. Դու կը դառնաս կազինի կոմբալ, որ ին կողքիս կոտրուես:  
Ես կը դառնամ ձուլթ ձուլթ խաղող թփից կախած:  
Կնիկ. Դու կը դառնաս ձուլթ ձուլթ խաղող թփից կախած: Ես  
կը դառնամ սուր սուր դանակ, գամ՝ քեզ կարեմ:  
Երեւ. Դու կը դառնաս սուր սուր գանակ, գաս ինձ կտրես: Ես կը  
դառնամ կարմիք զինի, լըցուեմ կարսա:  
Կնիկ. Դու կը դառնաս կարմիք զինի, լըցուես կարսա: Ես կը դառ-  
նամ Սարմիծ Մայրօ, գամ՝ քեզ խմեմ: Ես կը դառ-  
նամ Թէեթ Թունդ քացալ, քեզ հացանեմ:

## 9. ԾԵԾՈՒԱՌ ԳԱՌՆԻԿ

Հինգո՞ւ կու լաս զուն, գառնիկ։  
— Փիստ ծեծ կերայ ես, մարիկ։  
Շո՞վ ծեծեց քեզ, իմ կառնիկ։  
— Մէկ ծեր պառաւ փիս կնիկ։  
Հինգո՞ւ ծեծեց քեզ, զառնիկ։  
— Շառի տակն էի, մարիկ։  
Հինգո՞վ ծեծեց քեզ, զառնիկ։

— Մէկ ծիպոտվ, իմ մարիկ։  
Շո՞ր տեղդ խփեց քեզ, զառնիկ։  
— Ոտիկներիս, իմ մարիկ։  
Հի՞նչպէս լացիր զուն, զառնիկ։  
— Մէկ մէկ, մէկ, իմ մարիկ։

## 10. ԱՂՅՈՒՍԻ ԹԻՒԲԵՆ

Մէկ չոշ հոռ, վեցն երեն եր, մէջն  
Հերց յագեր ոռուունել էր.

Աղուեն հետակա մէսը կը լի 8 հայոց իշխան  
 • Աղուեն ասաց. «Տեղ եւ է».  
 Հաւեւ վաստի փոքի բէջ է»,  
 Աղուեն փորող պարագաները  
 Աղու, պատկա աղբէ ոտուլ.  
 Գուշ ոնից տէմ պարտընէ, օւսան առեցը է առ  
 Մաս պատկա աշխատինէ:  
 Աղուեն ենաւ տափի նափի, առ առ առ  
 Բայց եւր կարուս նանփի  
 Վաղենէրը արց երդուի....  
 և լուսոյ եւ, օրհնելու լուսի»:  
**11. ՄՈՒԹ**  
 Մէկ պատկեկ մարդ կար չը կար,  
 Անապատի մէջ Ճգնում էր.  
 Օր կորեկի մի կուտ կ'ուտէք,  
 Կէսն աղքատի բաժին կ'անէք.  
 Տէլոր մէջքով հող էր կուտմ,  
 Բորբէկ ոտով փուշ էր քաղում,  
 Եկեղեցու պատն էր շարում,  
 Ինքն էր դրում, ինքն էր կարգում,  
 Զում իրիկուն աղօթք անում:

○ ○ ○

Օըն էր շաբաթ լոյս կիբակին՝  
 Պատարագի պակսեց բաժկին:

○ ○ ○

«Մինչ քաղաք մէկ գնացի,  
 Գլուխը դըրի քէւ քուն արի.  
 Ուսնակտոր մոլորուեցայ  
 Քաղցը աղբիւթին ըռաստ եկայ:  
 Երեք հատ գող իմ դէմս ելան,  
 Մէկն ասաց—Խամփից հանենք.  
 Մէկն ասաց—ոչ խփենք կորցնենք,  
 Ոչ Խամփից հանենք.

Հայոց մասը և անումը և Աշխաթհքի մեղքը  
 Վըէն շալիկնը—տանիք: Կ անում  
 Մէկ կտոր տեղ ես գնացի  
 Սաղմոսարանս կլորեցի. \* ոց զի  
 Մէկ կտոր էլ տեղ գնացի  
 Աւետարանս խորեցի.  
 Մէկ կտոր էլ որ գնացի  
 Ժամագիւթք թաղեցի:  
 Կարձն ասեմ, այնքան գնացի  
 Մինչ մեղասծուն, էլ մոռացի:  
 Տէ՛ր, Դու գիտես, կամքդ քոնն է.  
 Ես Գո ստեղծած, Դուն իմ Աստուած:

**12. ԱՆԻՍԼԻՔ ՄԱՐԴ \***)

Եղել է մէկ մարդ շատ հարուստ, ունեօր. ծուռ մօւռ  
 ապրելով, ինչ ունէր չընէր կերաւ, նատեց գատարկի: Հայ  
 մաց կտրուեցաւ. մէկ ձեռքը դրեց ծոցը, մէկ ձեռքը երեսին  
 չէր իմանում ինչ անէ: Ախ վախ անելով՝ հալլում մաշվում էր:  
 Բարեկամներն եկան \* գլխին հաւաքուեցան, և նոցանից  
 ծերը առաւ ու ասաց. «Դու մէկ մեղք ես գործել, քո գան-  
 ձանակը քեզանից \* խրանել փախել է. վեր կաց \* գնա քո գան-  
 ձանակի ետե, գուցէ էլի \* գտնես և առաջուայ պէս բախտա-  
 ւորուես»:

Մարդը \* գլխի ընկաւ. վեր կացաւ սար ու քար ընկաւ,  
 գիշեր ցերեկ իւր գանձանակը \* փնտուց: Մէկ գիշեր երազում  
 տեսաւ, որ իւր գանձանակը \* բարձր սարի վերայ \* գլւխը  
 \* ծռած \* նստած է և նա էլ ախ ու վախ է անում: \* Առաւո-  
 տեան զարթնելիս այն սարի Ճանապարհը բռնեց:  
 \* Գնաց Ճանապարհին մի առիւծ տեսաւ \* նստած: Առիւծը

\*) Մինչև այս տեղ պատմութեան, և ընթերցանութեան հատուած-  
 ները իրացից բաժանուած էին. այսուհետեւ նոյն այս պատմութիւններն էլ  
 պիտի կարդացուին: Կարդալու ժամանակ սատղանէց բառերի վերայ մանուկները  
 առանձին ուշադրութիւն պիտի է դարձնեն:

մարդուն կանչեց հարցրեց. «Ո՞ւր ես գնում: Մարդն ասաց. «Դնում եմ \* գանձանակս զբանեմ: Առիւծն ասաց. «Ես գիտեմ; որ քո \* գանձանակդ շատ գիտուն է. նորանից հարցրու տես, թէ ես ինչո՞վ կը լաւանամ: ահա եօթբ տարի է հիւանդ եմ: դառնալուդ արի ինձ պատմիր, ես էլ իմ ձեռքից եկած լաւութիւնը կ'անեմ: Մարդը խօսք տուեց, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ մէկ այզի, որ հազար \* նմուշ \* պաղով \* լրուկ էր. քանի քաղեց որ ուտի, տեսաւ որ լեզի ենտ Այգու տէրը \* նշարեց, այս մարդու վերայ բարկացաւ, յետոյ հարցրեց. «Ո՞ւր ես գնում: Մարդն իւր դարդը պատմեց այգու տիրոջ: «Դէ, թէ որ այդպէս է, քո գանձանակից հարցրու իմ այգու դարմանն ի՞նչ է, որ ինչ անեմ չ'անեմ, պառվները դառն են \* բհամ գալիս: Պատրուս արեցի՝ չ'ելաւ. նոր ծառ \* անկեցի՝ չ'ելաւ: Երբ դառնաս՝ պատասխան բեր ինձ, իմ ձեռից էլ ինչ լաւութիւն գայ, կ'անեմ քեզ: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, հասաւ մէկ շէն շքեղ բերդ. մտաւ մէջը, տեսաւ որ մէկ ջահիլ աղջիկ պալատի մէջ ման է գալիս: Նա այս մարդուն հարցրեց. «Եղբայր, դու այս տեղ ի՞նչ բան ունիս: Մարդն իւր զլիսի եկածը պատմեց:

Աղջիկը դարձաւ ասաց նորան. «Ես շատ գանձ \* հարսութիւն ունիմ, շատ մալ ու ապրանք, բայց մի ցաւ ունիմ՝ որ գիշեր ցերեկ վեշտ է սրտիս: Թէ որ, քո գանձանակից ինձ համար մի ճար հարցնես, ամենայն տեսակ բարութիւն կու տամ քեզ: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, ահա տեսաւ, որ իւր զանձանակը սարի \* գլխին նստել է: Բարեւ \* տուեց, \* նստեց. շատ գանգատ արեց, վերջը \* պասպրած բաների ճարը հարցրեց, ամենի պատասխանն տռաւ:

«Դէ, հիմի վեր կաց, գնանք», ասաց: Դու առաջ գնա, ես էլ կու գամ, ասաց գանձանակը: Մարդը դարձաւ, առաջ այն \* աղջիկան տեսաւ, ասաց.

«Քո դեղն այն է, որ դու մէկ կտրիչին ամեւնանաս, քո վիշտը ու ցաւը կ'անցնի»:

Եկաւ այդին. տիրոջ կանչեց, ասաց, «Քո այդու ջուրը որ առուից որ գալիս է, այն առուի մէջ ոսկիչ հանք կայ, ոսկոյ փշրանքը \* ջրի հետ գալիս է, ծառերը \* ծծում են, \* պտուղները դառնանում են. կամ \* ջրի առուն փոխիր, կամ հանքը փորիր և դուրս հան, \* պառվները կ'անուշանան»:

Եկաւ առիւծի մօտ, \* նստեց մարդը, պատմեց իւր գանձանակի տեսնելու, այգու տիրոջ ու աղջ կայ բաները: Ասիւծը հարցրեց. «Աղջիկը քեզ լաւութիւն չ'արեց»: Մարդն ասաց. «Ի՞նչպէս չէ, ասաց, արի դու ինձ առ, \* նստենք մէկ տեղ Աստծու բարութիւնը վայելնք, ես համաձայն չ'զայր:

Առիւծը հարցրեց. «Այգու տէրն ի՞նչ լաւութիւն արեց»: Մարդն ասաց. «Այգու տէրը ոսկու հանքերը հանեց, կօլու ոսկի դառան, ինձ տուեց: Ես չ'առայ, ասացի՝ Ո՞վ այդքան բան կը շալէկ և տուն կը տանէ»:

«Ե՞ւ, ասաց առիւծը, ի՞նձ համար ինչ զեղ ասաց»: Մարդը պատասխանեց. «Քեզ համար էլ ասաց, որ եթէ մէկ անխելք մարդու գլուխն ուտես, կը լաւանաս»:

Առիւծը սորա ասածները օրինաւոր կերպով վեր գիր արեց. թաթը պարզեց մարդու \* զլուկը, \* բանեց գետնով տուեց, \* փշրեց կերտւ: Ասաց. «Ես իմ Աստուած, քեզանից էլ անխելք մարդ այս աշխարհքում չ'եմ \* գտնիւ»:

13. ԵԱՀՈԳԵՏԵՆՑ ԱՂՋԻԿ Հայունական բանք

Ժամանակով Նահապետենց բազեկ կար, շատ հարուստ էր: Միտք արեց Երուսաղէմ գնալ: Իւր \* տղի, իւր \* կնկայ հետ Ճանապարհ ընկաւ: Սոքու ունէին մէկ \* անման աղջիկ, հասած աղջիկ, կոյս աղջիկ: Այդ աղջիկը պահ ոսկին գիւղի ու էսի տունը:

Ուկոի միտքը փոխուեցաւ, ուզեց աղջ կան իւր կին շնել: շատ աշխատեցաւ՝ չը կարողացաւ \* աղջ կայ սիրտն առնելք պա-

առաների ջաղերով էլ չը կարողացաւ: Աղջեկը երբ որ շատ  
նեղն ընկաւ, խօսք տուեց և ասաց ուսին: «Դէ, որ այդպէս  
է, արի առաջ գլուխդ լուանմամ, որ մաքրուիս: Սապոնը լաւ  
\* փրփրացըեց. քիթ, բերան, աչքու երես \* փրփուրով \* լցրեց.  
ուղածիդ պէս քօթկեց ուսին, ջարդեց թէ թիկոնքը, \* գլուխ  
\* մլուխը, թռողեց գնաց:

Ուսւը սապոնի \* մռմռւրից ըս կարողացաւ աչքերը բա-  
նալ կատաղութիւնից արիւնը գլուխն ընկաւ, խելքը գնաց,  
մինչեւ որ հան հուն խելք գլուխ ժողովեց, վեր կացաւ \* լրա-  
ցուեցաւ, սրբուեցաւ: Տեսաւ, թէ ինչպէս խաղջ խայտառակ  
եղաւ, ասաց. \* «Համ \* կամքս ըս կատարուեցաւ, համ աշխարհքի  
ծաղը ու ծանակ դառայ գիւղի մեծ ու \* պստիկի առաջ ի՞նչ  
անեմ: Վեր կացաւ \* աղջկայ հօրը գիր \* գրեց, թէ Դուք ձեր  
աղջեկը ինձ պահ տուիք, ամա ձեր աղջեկը փախաւ. երես  
բաց հարիւր մարդու տուն գնում գալիս է: — Աղջկայ հայրն  
ու մայրը զիր որ առան, ուխա մուխտ հարամ դառաւ իւր-  
եանց \* զիսին: վեր կացան դարձան տուն գալու: Հայրը շատ  
բարկացաւ, ասաց գնամ սպանեմ \* աղջկաս, որ ինձ անպատիւ  
արեց:

Աղջեկը գիտէր, որ հայրը շատ կատաղած է, վախեցաւ,  
տուն չեկաւ: Վեր առաւ իւր աղլուխը, հաւի արեսն մէջ  
թաթիսեց, հովուին \* տուեց, ասաց. «Տար \* հօրս տուր, սա  
\* աղջիկդ քեզ համար մեռել է: Ինքը գնաց կորչելու: Գայց,  
գնաց, անտառի մէջ մոլորուեցաւ, տեսաւ \* ջրի աւազան, ա-  
ւազանի մօտ չինարի ծառ. ելաւ չինարի ծառի զլուխը \* նսաց:  
Շատ մնաց, քիչ մնաց, նստանայ թագաւորի որդին եկաւ որս,  
իջաւ տաւազանի մօտ: Արեգակը չինարի ծառի շուքը \* խփել էր  
աւազանի մէջ, շուքի միջեց էլ մէկ մարդու շուք էլ էր երե-  
ռում: Թագաւորի որդին վերև նայեց, տեսաւ որ մէկը \* Ճղների  
մէջ պահուել է: Ասաց. «Ի՞ն ես, ջի՞ն ես, աղամորդի՞ն ես. ցած  
կու գառ՝ արի, թէ չէ մէկնետուանեղով ցած կը բերեմ քեզ: Աղջիկը  
ասաց. «Ես ոչին եմ, ոչին: Ես էլ քեզ պէս տղամ-

որդի եմ: Ես կ'իջնեմ, ամա \* տկրոր եմ, կոյս աղջեկ եմ. քո  
կարէն գիր այդ տեղ, դու քաշուիր այն կողմը, ես գամ հագ-  
նեմ:

Աղջիկն իջաւ, հագաւ կարէն: Թագաւորի \* տղին եկաւ  
տեսաւ, որ մի մարալ աղջեկ է, որ չ'ուտես ըս \* խմես, միայն  
երեսը նայես: «Ել ի՞նչ որս անեմ, դու եղեր իմ հարս»: Աղջ-  
կան ձի նատեցրեց, տարաւ առւն, թագաւորին ասաց. «Հայր,  
իմ ուղածը իմ բերած աղջեկն է: Հայր մայր ասացին. «Որդի,  
ո՞վ գիտէ այն ի՞նչ ջինս է, անտառի մէջ \* գտած աղջեկը  
մարդո՞ւց է, զիւանսական է, ի՞նչ է»:

— Զէ, ասաց \* տղան, ես նորան պէտք է առնեմ:

«Քո մուրը՝ քո ճակատին», ասացին: Աղջկան նշանեցին,  
\* պսակեցին. մէկ տարուց յետոյ Աստուած զաւակ տուեց նոցա:  
Մինչեւ այս օր հարսը փեսի հետ չէր խօսել: Մէկ օր հարսը  
իւր \* տղին օրօրոց \* գրեց, մէկ ձեռքով օրօրեց, մէկ բերան գով-  
քըն ասաց, մէկ բերան էլ լաց եղաւ: Փեսան այդ ժամանակ  
հասաւ, ասաց. «Կնիկ, ինչի՞ ես լաց լինում, դարդդ ի՞նչ է»:

— Ա՛յս, ասաց, իսկի չես ասում: ես էլ հայր ունիմ,  
մայր ունիմ, ջիգար ունիմ, կարօտել եմ: Խօ ես քարից չե՞մ  
ծնուել ծառի \* վրէն չե՞մ բուսել: Ի՞նչ կը լի, թողնես երթամ  
\* հօրս \* մօրս տեսնեմ, դառնամ:

Թագաւորի տղին կանչեց իւր վեղերին, սայլեր սարքել  
տուեց, հարիւր ջան էլ զօրք: Վեղերին ասաց. «Քո խաթունիդ  
տար հօրանց տուն, դու դարձիր»:

Գնացին մէկ օրուայ Ճանապարհ. իջան, հաց կերան,  
ամեն մարդ գնաց \* հանգստանալու. վեղերը չէ քնում: Դու մի  
ասա խաթունի երեխին ուղում է գողանալ իւր երեխին տեղը  
դնել: Գնաց կամաց խաթունի երեխին \* փախցրեց, տեղն ուրիշ  
գրեց: Վեղերը տարաւ խաթունի երեխին մորթեց: Խաթունը  
մի երեխի ձայն իմացաւ, ասաց. «Այս իմ երեխի ձայնն է,  
բայց պառկածն ո՞վ է: Նայեց, Ճանաչեց, որ փոխել են: Վե-  
ղերը հեռուից գալիս էր թուրը սրբելով: Խաթունն իմացաւ,

Թր մորթողը նա է: Փախաւ անտառը, հասաւ մէկ \* հովուի  
ասաց. «Հովիւ հովիւ, իմ հալաւը տամ քեզ, քո հալաւը ինձ  
տուրու:—Աչքիս վերան, ասաց ու փոխեցին: Մի քօլօղ էլ  
\* զլիին հագաւ, մաղերը \* կտրտեց, գնայ իւր հօր տունը:

Բաղեկը \* դրան \* կշտին \* նստած էր, չերուխ էր քաշում  
Գնաց ձեռքը պաշեց, բարեւ տուեց, բարեւ առաւ: Դարձաւ  
Բաղեկը հարցրեց. «Քօլօղով տղայ, ո՞ր տեղից ես գալիս, ի՞նչ  
կուզես:

Ասաց. «Աղա, լսել եմ շատ \* մշակներ ունիս. ինձ էլ  
բռնէ, մի բանի դիր. հայրերան կաշխատեմ:

— Գնա, ասաց, մեր հաւերն արածէ:

Դրա մնան այդ տեղ, մենք գառնանք վեզերին:

Վեզերը ետ դարձաւ, թագաւորի տղին այս պատմեց.  
«Իս կնիկը քո զաւակիդ սպանեց, զիշերանց թողեց փախաւ:

Թագաւորի որդին առաւ վեզերին, շատ զրբ ու գնաց  
\* փնտռելու: Գնացին իջան Բագկանց տունը, հարց փորձ արեցին,  
ոչինչ չիմացան: Երիկնահաց կերան: Թագաւորի որդին  
ասաց. «Հեքիաթ ասող չունի՞ք, ականջ անենք»: Զայնն ընկաւ  
հաւարածի ականջը. ևս կ'ասեմ հեքիաթ: Բազեկն ասաց.  
Ամօթ է, այն կեղտոտ տղին մի հանէք թագաւորի որդու  
առաջ: Թագաւորի որդին իմացաւ, ասաց. «Թողեք, թող  
դայ, բան չը կայ»: Քօլօղով տղին եկաւ, \* նստեց, ասաց. ևս  
հեքիաթ կ'ասեմ, ամա դիւղի ռէսն ու վեզերը պէտք է գան,  
այս տեղ նստեն. \* գոները պէտք է փակեմ, մարդ գուրս չը  
գնայ, մինչև ասեմ \* որածնեմ: Կանչցին, վեզերն ու ռեսը եկան.  
դոները փակեց, բերանը բաց արտւ. իւր \* զլսով անցածները  
հեքիաթ էր շինել ու պատմեց: Երբ որ խօսքը ռէսի վերայ  
եկաւ, ռէսի փորի ցաւը \* բանեց. խօսքն եկաւ վեզերի վերայ,  
վեզերի փորի ցաւը \* բռնեց. ինչ արին, \* դոները բաց չ'արաւ,  
մինչեւ իւր հեքիաթն աւարտեց: Դարձաւ ասաց. «Դու իմ  
հայրն ես, սա իմ երիկն է, զա այն սատանայ ռէսն է, սա  
էլ սատանի քեռի վեզերն է, ես էլ ես եմ»:

Իսկոյն վեզերի վեզը \* թոցրեցին, ռէսի փորը թափեցին:  
Հայրն ու աղջեկը, էրիկն ու կնիկը մէկ մէկու վերայ ուրա-  
խացան:

#### 14. ԳԱԶԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մէկ իշխանի տղան ուղեց թագաւորի աղջեկը չը տուե-  
ցին: Նա քաղաքից ու \* տնից հրաժարուեցաւ, գնաց հեռու  
անտառի մէջ բնակելու, և ապրում էր ամենայն օր որս  
անելով:

Մէկ օր սովորութիւնից գուրս երկու որս \* բռնեց. գառ-  
նալու ժամանակ աხսաւ, որ իւր բնակարանի մօտ մէկ աղուէս  
է \* նստած, նա իսկոյն վազեց մարդու ձեռքից որսերն առաւ,  
\* շնորհքով մաքրեց պատրաստեց. մէկը բերեց մարդուն, միւսն  
ինքը ճաշակեց:

Միւս օր դարձեալ որսի գնաց, և երեք որս որսաց. Մըտ-  
քում ասաց. «Երեկի այս օր էլ նոր հիւր ունիս: Եկաւ տեսաւ  
ահագին արջ է նստել աղուէսի \* կշտին: Աղուէսը վազեց առաւ  
որսերը պատրաստեց. և մէկ մասն էլ արջին համեցէք արեց:

Մէկ էլ օր չորս որս որսաց և զառնալիս տեսաւ, որ մի  
գայլ բաղմել է արջի մօտ: Աղուէսն իւր պաշտօնը կատարեց:

Առաւօտը՝ հինգ որս որսաց. դարձաւ տեսաւ ահագին  
առիւծ փառաւոր բաղմած: Աղուէսն իւր բանը շինեց:

Այսպէս շարունակ աւելացան զազանների մէջ մէկ մէծ  
թուլն՝ Անկա Զմրութ անունով՝ և մէկ էլ կատունների թա-  
գաւոր, վագր: Աղուէսը ծառայի պէս իւր գործը կատարում էր:

Իշխանի որդին զարմանում և սարսափում էր. գազան-  
ների զազանութիւնից ահուզողի մէջ էր ընկնում, նոցա խա-  
զալ ընկերութիւնից հիանում էր: Բայց էլ ի՞նչ էր ուզում:  
ահա \* սբանչելի գերգատան իւր համար. ընտանիք, բարեկամ-  
ներ, ընկերներ: Մարդն այսպէս ապրել շարունակեց, և օրէ  
ցօր աւելի \* հանգստանում էր:

Որսորդն էլի որսի գնաց: Աղուէսը բոլոր գաղաններին

կանչեց ատեան կազմելու և խորհուրդ անելու։ Գնացին բաց հրապարակ տեղ՝ աղուէսը մի հաստաբուն կաղնիի կոճ \* գտաւ և ելաւ վըէն։ Պարոն աղուէսը իւր գահի վերայ նասոած՝ խրատ կարգաց նոցա, թէ իշխանի աղբն որքան բարութիւն է անում իւրեանց։ «Եկէք, ասաց, այսուհետեւ նա մեր Տէրը լինի, ծառայենք նորան \* սրտով, \* մաքով, հաւատարմութեամբ։ Գազանները իւրեանց մէկ թաթիկը բարձրացուցին, թռչունն իւր մէկ թեր բաց արաւ, թէ լաւ այդպէս լինի։

«Մեր տէրը, ասաց աղուէսը, մարդ է և իշխանի որդի է, նորան հարկաւոր է մէկ պատուական \* վրան կարդ ու սարքով, ո՞վ կը բերէ այս բաները»։

Ամենքն ասացին, թէ Անկա Զմրութը թող բերէ, մենք ուրիշ բանի պէտք կու գանք; Նա յանձն առաւ, գնաց ու բերեց իւր թեսերով ամենայն բան։ Աղուէսը վրանը կանգնեցնել առուց, անկողին կահ կարասէք զարդարեց, ուտելու խմելու բաներ պատրաստեց։

Իրիկունը տէրը դարձաւ, ամենքը գիմաւորեցին, փառաւոր կերպով տուն բերեցին։ Աղուէսը որսերը մաքրեց, մէկ մասը պղնձի մջ և փեց որսորդի համար, \* շնորհքով սեղան շնեց, տէրը գոհութեամբ կերաւ, սիրան էլ գողում էր։ Գազաններն էլ իւրեանց բամբնը լափեցին։

Միւս առաւօտ աղուէսն էլ տուաը շարժելով գահը բարձրացաւ, ատենականները ժողովեցան։

«Գիտէք, ասաց աղուէսը, պապերից մենք ի՞նչ ենք լսել։ Աղամը բոլոր կենդանիները զոյդ զոյդ տեսաւ, \* Աստծուն գանգատեց, որ ինքը միայն մէնակ է, Աստուած էլ նւա տուեց նորան։ Էհ, Աստուած չէ հաւանի, որ մեր տէրը մէնակ է ապրում։ Մեր տիրոջ կնիկ է հարկաւոր, այն կնիկը թագաւորի աղջիկ պէտք է լինի։ Դէ, բերէք այդ կնիկը։»

Մատածեցին։ — Մեր խօսքը մէկ է, բայց չեն թողնի գաղաններին, որ պալատի պարտիզին մօտենան։ — Էլ Անկա Զըմբութից խնդրեցին, որ այս էլ նա կատարէ։

Թուշունը գնաց յափշտակեց բերաւ, թագաւորի աղջիկը սարսափելի գաղանների ժողովի մջ էր, բայց ամենքից յարգանքներ ու պատիւներ ընդունեց։ Մանաւանդ պարոն աղուէսը \* քաղցր լեզուով և \* կոտրտուելով \* հանգստացրեց նորան։

Այս օր որսորդը ութ որս որսաց։ \* Մտքում ասում էր, թէ ո՞վ գիտէ ինչ նոր գաղան ընկերացել է։ Բայց ի՞նչ տեսաւ. իւր սիրած թագաւորի աղջկան։ ո՞քան ուրախացան երկուսն էլ։

Թագաւորը բարկացած՝ մարդիկ ուղարկեց անտառ, որ իւր աղջկան գտնեն բերեն։ Աղուէսը հեռուից տեսաւ նոցա, և իսկոյն արջին ու գայլին հրամաններ տուեց։ Սոքա գնացին բոլորին պատառ պատառ արին, մէկին ողջ թողեցին, որ գնայ թագաւորին պատմէ տեսածը։

Թագաւորն ուղարկեց աւելի մարդիկ. աղուէսը առիւծին և վագրին առաջ ձգեց, հրամայելով որ մէկին էլ ողջ թողնեն։

Թագաւորը ահազին զօրք ժողովեց։ Աղուէսն էլ զահի վրայ բարձրացաւ, հրամայեց գաղաններին, որ ամէն մէկը գնայ իւր աղջը բերէ։ Միւս օր որսորդը որ եկաւ, տեսաւ որ բոլոր անտառը գաղաններով լիքն է. իւր ծառանները առաջ եկան և աղուէսը հասկացրեց, թէ ինչու համար հաւաքուել են։ Միւս օր թագաւորը զօրքով եկաւ, գտղանները կոիւ գնացին և յաղթեցին։ Իրանց տիրոջ ատրան քաղաք, թագաւոր շինեցին. աղուէսը դառաւ մեծ վեզիր, միւններն էլ նազիր վեզիր։

#### 15. ՀԱԶԱՐԱՆ \* ԲԼԱՌԻ.

Մէկ թագաւոր եօթը ասրի շինել տուեց մի եկեղեցի։ Օծեցին. թագաւորը գնաց աղօթք անելու։ Մէկ էլ այնպիսի բուք բարձրացաւ, որ թագաւորը քիչ մնաց պէտք է \* իսեղդուէր։ Տեսաւ մէկ \* ճգնաւոր իւր առաջ կանգնած։ «Թագաւորը ապրած կենայ, ասաց \* ճգնաւորը, սիրուն եկեղեցի շի-

նեցիր, բայց մէկ բան պակասում է», Բուքը \*իստացաւ,  
\*Ճգնաւորը աներևոյթ եղաւ:

Թագաւորը եկեղեցին քանդել տուեց, եօթը տարի շինել  
տուեց, առաջնից էլ աւելի սիրոն: Օծեցին. Թագաւորը զնաց  
աղօթք անելու: Բուք բարձրացաւ. Ճգնաւորն էլի եկաւ և  
ասաց. «Թագաւոր, ապրած կենաս, պայծառ է եկեղեցիդ, բայց  
մէկ բան պակասում է»:

Մէկ էլ քանդել տուեց թագաւորը: «Աշխատեցէք ուղեղ  
ինը տարի, ասաց, այնպէս շինեցէք, որ աշխարհքի երեսը  
տեսած չը լինի նմանը»: Շինեցին, օծեցին: Թագաւորը զնաց  
աղօթք անելու, բուքն \*սկսուեցաւ. Ճգնաւորն առաջեւ  
\* տնկուեցաւ: «Թագաւորն ապրած լինի, ասաց, \* աննման է  
քո շինած եկեղեցին, ափսոս որ մէկ բան պակաս է»: Թագաւորը  
վերջապէս Ճգնաւորի փողպատը բռնեց: «Մէկ ասա, տես-  
նեմ, իմ եկեղեցու պակասութիւնն ի՞նչ է. դու երեք ան-  
գամ քանդել տուիր ինձ:—Այս եկեղեցուն Հաղարան՝ \* ըլլ-  
բուլ է պէտք, որ միայն սորան է վայելը:—Ճգնաւորն անե-  
րևոյթ եղաւ: Թագաւորը տուն եկաւ:

Սա \* մոտածեց, թէ ծերացած է ինքը. Ժամի համար  
Հաղարան՝ \* ըլլուլ է պէտք, ի՞նչպէս երթայ բերէ:

«Մենք կերթանք կը բերենք, ասացին: Մէկ տեղ հասան, տեսան  
որ ճանապարհը երեք ճիւղ է, \* շուարած կանգնեցին:

Ճգնաւորը պատահեցաւ նոցա, հարցրեց. «Ո՞ր էք զնում,  
\* կտրիՃներ:—Գնում ենք Հաղարան ըլլուլ բերելու, չը գի-  
տենք ո՞ր ճանապարհով գնանք:

Ճգնաւորն ասաց. «Այս լայն ճանապարհ երթացողը կը  
դառնայ. միջնու ճանապարհ երթացողը՝ կամ դառնայ կամ չը  
դառնայ. ցածրի ճանապարհ երթացողը՝ յոց չը կայ որ դառ-  
նայ:—Ի՞նչի, հարցրեց փոքրը: «Կերթաս, ասաց, մի գետ  
կայ, Հաղարան ըլլուլ տէրը նորան աղի է արել, չի \* խմուի,  
դու պիտի խմես, ասես. Օ՛խ, անմահութեան ջուր է: Գետը

կ'անցնես, մէկ անտառ կու գայ, այն արել է չարփուշ. դու  
պէտք է քաղես, հոտոտես, ասես. Օ՛խ, արքայութեան ծա-  
ղիկ է: Անտառը կ'անցնես, կը տեսնես մէկ կողմ գայլ կապած,  
միւս կողմ գառն. գայլի առաջև խոտ, գառի առաջն միս.  
պէտք է վերցնես միսը դնես գայլի առաջն, խոտը՝ գառի  
առաջն:

«Կ'անցնես կերթաս կը հասնես մի մեծ գուռ, մէկ փեղ-  
կը փակ, մէկ փեղկը բաց. փակ փեղկը պէտք է բանաս, բացը՝  
փակես: Ներս կը մտնես կը տեսնես, որ Հաղարան ըլլուլի տէրը  
քնել է. եօթն օր քնում է, եօթն օր արթուն է: Թէ որ ա-  
սածներս կարողացար կատարել, Հաղարան ըլլուլը կը բերես,  
ապա թէ չ' ոչ կարող ես երթալ ոչ կարող ես գառնալ»:

Եղայրները ձի հեծան, մեծը լայն ճանապարհով գնաց,  
միջնակը միջն, փոքրը ցած ճանապարհը բռնեց զնաց: Փոքրին  
ետեւ ետեւ պատահեցան՝ գետ, անտառ, գայլ, գառն, դուռն.  
Ճգնաւորի ասածը բոլորն էլ արեց. ներս մտաւ տեսաւ որ մի  
ջէյրան մասալ աղջիկ է պառկած: Հաղարան ըլլուլիւր վան-  
դակից իջաւ նստեց աղջկաց սրտի վերայ՝ հաղար լեզուսի  
\* Ճլվլեց, \* ըլլեց: Աղջկան քունն էր տարել, ողբէն ելաւ  
Հաղարան ըլլուլը առաւ, աղջկայ երեսի վերայ էլ իւր պառնիկ-  
ներով մի \* նշան \* գրեց, ետ գարձաւ իւր ճանապարհը:

Աղջկը քնից որ զարթեցաւ, տեսաւ որ ըլլուլը չը կայ.  
իմացաւ որ տարել են, գոռաց. «Դուռ, \* բռնիր»: «Դուռն ա-  
սաց—Աստուած նորա հետ լինի, իմ բաց փեղկը փակեց, փակ  
փեղկը բացեց:

Գոռաց. «Դու՛լլ գա՛ռ, բռնեցէք»:  
Ասացին—Աստուած նորա հետ լինի. խոտ գտախ տօւաւ,  
միս՝ գայլիս:

Գոռաց. «Անտա՛ռ, բռնիր»:  
Ասաց—Աստուած նորա հետ լինի. դու ինձ չարփուշ  
արեցիր, նա արքայութեան ծաղիկ արեց:  
Գոռաց. «Դե՛տ, դու բռնիր»:

Ասաց—ինչի՞ բռնեմ, զու ինձ արեցիր դառնաղի, նա  
արեց անմահութեան ջուր. թող գնայ, Աստուած նորա հետ  
լինի:

Աղջիկը անձար մնաց. հեծաւ իւր ձին: Մենք թողնենք  
նորան իւր ձիու վերայ:

Փոքր եղայրն եկաւ ճգնաւորի մօտ, տեսաւ եղայրնե-  
րին, որ ճանապարհից դարձել էին: Հազարան բլըուլը առան  
երեք եղայրները միատեղ շարունակեցին ճանապարհը տուն  
գնալու համար: Նարաւեցան, հասան մի հորի բերան: Փոքր  
եղօրը իջուցին, որ ջուր հանէ: Ջուրը քաշեցին, եղօրը  
թողեցին հորի մէջ: Երկու եղայր մէկ մէկու ասացին. «Նա որ  
մեզ հետ լինի, մեր հօր առաջև մենք ի՞նչ երեսով երեանք»:  
Առան Հազարան բլըուլը գնացին: Հասան տունը, հօրն ասացին.  
«Մեր փոքր եղայրը սպանուեցաւ. Հազարան բլըուլը մենք  
ճարեցինք, բերինք»: Հազարան բլըուլը կախեցին ժամի մէջ,  
իսկի ոչ ձայն ածեց ոչ շունչ:

Աղջիկն իւր ձիով հասաւ թագաւորի մօտ, ասաց. «Այն  
\* կտրի՛՛ն ո՞վ է, որ իմ Հազարան բլըուլը բերել է»: Երկու  
եղայրներն ասացին. «Մենք ենք»: — Ի՞նչ տեսաք ճանապարհի  
վերայ: «Ունչ ըստ տեսանք»: — Դուք չէք բերողը, դուք գող  
էք», ասաց: Բռնեց \* բռնատուն դրեց թագաւորին էլ երկու  
եղօրն էլ ինքը տիրեց քաղաքը նստեց: «Մինչև Հազարան  
բլըուլ բերողը չը դայ, ձեզ ազատել չը կայ»:

Սոքա մնան այն տեղ, մենք գնանք փոքր տղին:

Գարի քաղող կնիկներ տղին հորից հանեցին: Մէկ պա-  
ռաւ կին նորան հոգեզաւակ արեց: Մի քանի շաբաթ անցաւ,  
ձայն ձայնի ընկաւ, հասաւ մինչև տղի ականջը, թէ Հազա-  
րան բլըուլ բերողն եկել է, տէրն էլ ետեկից հասել է: Մէկ օր  
աղջին պառաւից հրաման առաւ, ասաց. «Երթամ քաղաք, մի  
նոր զարմանալի ժամ են շինել տեսնեմ»: Գնաց իւրեանց տուն,  
տեսաւ որ ոչ հայր կայ, ոչ եղայրներ: Հարցրեց. «Ո՞ր են»:  
Ասացին—Հազարան բլըուլ տէրն եկել է, բռնատուն է դրել:

Տղին գնաց բռնատնից հանեց հօրն ու եղայրներին: Աղջիկն  
ասաց. «Ես Հազարան բլըուլի տէրն եմ: զու ինձանից չե՞ն  
վախենում»: Տղին ասաց—Ես Հազարան բլըուլի բերողն եմ,  
չե՞մ վախենայ:

Աղջիկը հարցրեց. «Ճանապարհի վրայ ի՞նչ ու ինչ  
տեսար»:

Տղին պատմեց՝ գետ, անտառ, գայլ խոտ, գուռ, ինչ որ  
արել էր, ինչ որ տեսել էր: «Թէ որ այդ բաներին չե՞ն հաւա-  
տայ, երեսիդ վերայ էլ մի նշան կայ. իմ նշանածն ես դու»: —  
Հալաւըլի քեզ, ասաց աղջիկը:

Հարսանիք կազմեցին, գնացին ժամը պսակուելու: Հաղա-  
րան բլըուլը \* ձլ վլտան սկսեց. հազար հազար եղանակներով  
ձայն հանեց, գայլայլայ էր արձակում, դալայլի էր երգում:

#### 16. ԲԻՒՐԱՊԱՏԻԿ

Կային մէկ մարդ մէկ կնիկ: Այս մարդը շատ ժամասէր  
էր: Ամենայն օր ժամ էր գնում, օրը մէկ դրօշ էր տալիս տէր-  
տէրին: Տէրտէրն էլ ամենայն օր նորան ասում էր. «Օրհնա՛ծ,  
Բիւրապատիկը քեզ մէկի տեղ հազար տայ»:

Մարդն ուրախանում էր, ինքն իրան ասում էր. «Այս  
լաւ բան է. մէկ տալիս եմ՝ հազար պէտք է առնեմ»:

Այսպէս գնալով գնալով ինչ որ ունէր տէրտէրին տուեց,  
աղքատացաւ: Կնիկն ասաց այս մարդուն. «Վեր կաց գնա՛տէր-  
տէրին, մէկ հազարը բեր, տանք հացի մացի, մինչև որ մէկ  
էլ հազարներն էլ կամաց կամաց տայ»:

